ՀՀ աշխատանի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Ա. Աբրահամյանը ներկայացրեց 2011-2013թթ. կենսաթոշակային ապահովության բնագավառում իրականացված աշխատանքներն ու արդյունքները:

Ա. Աբրահամյանը մասնավորապես նշեց, որ նախընթաց ժամանակահատվածում աշխատանքները հիմնականում միտված են եղել.

1) կենսաթոշակային ապահովության համակարգի կառավարելիության (վերահսկելիության) մակարդակի, ՀՀ պետական բյուջեից կատարվող վճարումների հասցեականության բարձրացմանը,

2) ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերի, իրավակիրառական պրակտիկայում սուբյեկտիվ գործոնների ազդեցության մակարդակի նվազեցմանը:

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով աշխատանքներ են տարվել հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) օրենսդրական դաշտի կատարելագործում (կենսաթոշակի նշանակման և վճարման գործընթացի հստակեցում),

2) կենսաթոշակային ապահովության բնագավառի տեղեկատվական ենթակառուցվածքի կատարելագործում (համապատասխան կապուղիների ներդրում, պետական կառավարման այլ մարմիններում առկա տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով ստանալն ապահովող կառուցակարգերի ներդրում, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի մշակում):

3) բիզնես գործընթացների (ընթացակարգերի) վերակազմակերպում՝ նպատակ ունենալով բարձրացնել արդյունավետությունը,

4) կենսաթոշակառուների վերաբերյալ տվյալների ճշգրտում:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում առկա խնդիրների լուծման համատեքստում հատկապես կարևորվեց «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի մշակումն ու ներդրումը:

Մասնավորապես, նշվեց, որ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը միանշանակ ապահովվում է շահառուների նույնականացումը. շահառուի անձնագրային տվյալները, նախկինում ձեռքով մուտքագրելու փոխարեն, մուտքագրվում են ինքնաշխատ եղանակով՝ բնակչության պետական ռեգիստրից բեռնելու միջոցով:

Արդյունքում, գործնականում բացառվում է սխալների (շահառուի անձնագրային տվյալներում անճշտությունների) առկայությունը:

«Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի շրջանակներում ձևավորվում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ. կենսաթոշակ նշանակելու համար ներկայացված փաստաթղթերը անմիջապես սկանավորվում և մուտքագրվում են տվյալների կենտրոնական պահոց, ինչը բացառում է ներկայացված փաստաթղթերի կորստյան ռիսկը:

Նախկին համակարգի շրջանակներում աշխատակիցը կայացնում էր որոշումներ և դրանք արտացոլում էր տեղեկատվական համակարգում: Արդյունքում, բարձր էր սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը գործընթացի վրա: Իսկ նոր համակարգը, մուտքագրված տվյալների հիման վրա, «կայացում» է որոշումներ և դրանք «ներկայացնում» է աշխատակցի հաստատմանը:

Որպես նոր համակարգի առավելություն՝ նշվեց նաև պետական կառավարման այլ մարմիններում առկա տեղեկատվությունն ինքնաշատ եղանակով կիրառելու հնարավորությունը: Մասնավորապես, բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվությունը, ՔԿԱԳ մարմիններից ստացված՝ անձանց մահվան վերաբերյալ տեղեկատվությունը համակարգում կիրառվում է ինքնաշխատ եղանակով, ինչը նվազագույն է հասցնում ոչ իրավաչափ վճարումների հավանականությունը (հնարավորությունը):

«Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում առկա են արդյունավետ մոնիթորինգ և վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ գործքակազմ. կիրառվում են ստանդարտ և ճկուն վերլուծական գործիքներ, ինչը հնարավորություն է տալիս առցանց հսկողության իրականացնել կատարված աշխատանքների ծավալի և բովանդակության նկատմամբ:

Էապես բարելավվել է նաև համակարգի խոցելիության աստիճանը: Մասնավորապես, արդիական տեխնոլոգիաների և լուծումների կիրառումը, համակարգում ներառված տվյալներում փոփոխություններ կատարելու հստակ սահմանված ընթացակարգերը բացառում են համակարգում ներառված տվյալները փոփոխելու (ջնջելու) հնարավորությունը (բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի), իսկ

համակարգից օգտվողների հստակ դերաբաշխման արդյունքում հնարավոր է միանշանակ նույնականացնել փոփոխություններ կատարած աշխատակցին:

Նախանշվեցին նաև առաջիկա անելիքները: Մասնավորապես, կարևորվեցին.

1) «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի շարունակական կատարելագործումը (ինքնաշխատ եղանակով կայացվող որոշումների շրջանակի ընդյալնումը)

2) սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից տվյալներն առցանց ռեժիմով ստանալն ապահովող մոդուլի ամբողջական կիրարկումը (ներկայումս գտնվում է փորձնական շահագործման փուլում),

3) Կենսաթոշակային ապահովության բնագավառի աշխատակիցների հավաստագրման համակարգի ներդրումը,

4) վերլուծական կարողությունների հզորացումը՝ որպես նպատակ դիտարկելով ռիսկերի վրա հիմնված վերահսկողության համակարգի ներդրումը,

5) կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսական կայունության ապահովում՝ հաշվի առնելով կենսաթոշակառուների թվաքանակի կանխատեսվող աճը: